

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 1 4 2**  
**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի**  
**2016թ. սեպտեմբերի 30-ին կայացած նիստի**

Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի  
Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի  
Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի  
անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

**Օրակարգ՝**

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2016-2017 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկման և հաստատման հարցը:

Ձեկուցող՝ Գիտական քարտուղար Հ.Ստեփանյան:

2. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփում:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

3. Առարկայական ծրագրերի հաստատման հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

4. Ընթացիկ հարց: Ասպիրանտների և հայցորդների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

5. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հայցորդ Արտաշես Գագիկի Բեգլարյանի ատենախոսության թեմայի փոփոխում:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

6. Ընթացիկ հարց: Գիտական խորհրդի կազմի փոփոխում:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյան

7. Ընթացիկ հարց: Հայ-ֆրանսիական իրավաբանական մասնագիտացումների ֆեդերացիայի նախագահ, Ակադեմիայի գործընկեր Ռայմոնդ Եզեգելյանին Ակադեմիայի ոսկե մեդալով պարգևատրելու հարցը:

8. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2016-2017 ուսումնական տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյան:

Ձեկուցողը ներկայացրեց 2016-2017 ուսումնական տարվա աշխատանքային պլանի նախագիծը:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Խ.Բեգիրջյանը:

**Որոշեցին՝** Հաստատել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2016-2017 ուսումնական տարվա աշխատանքային պլանը (կից ներկայացվում է):

2. **Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփումը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2016-2017 ուսումնական տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման ընդունելության քննությունների 1-ին և 2-րդ փուլերին դիմել են 186 հոգի, որոնցից մրցույթը հաղթահարել են 161-ը, ընդ որում՝ հանրային կառավարում՝ 24 հոգի (անվճար՝ 7, վճարովի՝ 17), հանրային ֆինանսների կառավարում՝ 25 հոգի (անվճար՝ 8, վճարովի՝ 17), գործարար վարչարարություն՝ 34 հոգի (անվճար՝ 0, վճարովի՝ 34), իրավագիտություն՝ 42 հոգի (անվճար՝ 13, վճարովի՝ 29), քաղաքագիտություն (քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն)՝ 24 հոգի (անվճար՝ 8, վճարովի՝ 16), հոգեբանություն՝ 12 հոգի (անվճար՝ 5, վճարովի՝ 7):

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը, Գ.Ադամյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներն ընդունել ի գիտություն(հաշվետվությունը կից ներկայացվում է):

**3. Լսեցին՝** Առարկայական ծրագրերի հաստատման հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Զեկուցողը նշեց, որ՝

1.Հոգեբանության ամբիոնում 2016թ. սեպտեմբերի 26-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և ակադեմիայի գիտական խորհրդին միջնորդում են հաստատել հետևյալ առարկայական ծրագրերը՝

1. Ժամանակակից հոգեբանության հիմնահարցեր
2. Անձի հիմնախնդիրը ժամանակակից տեսություններում
3. Մասնագիտական գործունեության հոգեֆիզիոլոգիական հիմունքները
4. Գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանություն և կատարում
5. Արդի սոցիալական հոգեբանություն
6. Իրավաբանական գործունեության հոգեբանություն
7. Իրավաբանական հոգեբանություն
8. Քաղաքական գործունեության հոգեբանություն
9. Կառավարման հոգեբանություն
10. Կոնֆլիկտի կառավարման հոգեբանություն
11. Խմբային գործունեության հոգեբանական կառավարում
12. Հոգեբանական ինքնակարգավորման մեթոդներ
13. Մաթեմատիկական մեթոդները հոգեբանության մեջ
14. Մասնագիտական զարգացման հոգեբանություն
15. Մասնագիտական կողմնորոշում և անձնակազմի ընտրության հոգեբանություն
16. Գործնական հաղորդակցման հոգեբանություն և էթիկա
17. Ներազդեցության հոգեբանություն
18. Ղեկավարի հոգեբանական կոմպենտետություն
19. Կազմակերպության PR-ի և գովազդի հոգեբանություն
20. Իմիջի հոգեբանություն
21. Աշխատանքային մոտիվացիայի զարգացման հոգեբանություն
22. Արդի հոգեբանություն
23. Անձնակազմի կառավարում
24. Կառավարման սոցիոլոգիա

2. Հանրային կառավարման ամբիոնում 2016թ. սեպտեմբերի 26-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և ակադեմիայի գիտական խորհրդին միջնորդում են հաստատել հետևյալ առարկայական ծրագրերը՝

1. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն
2. Կայուն զարգացման հիմնախնդիրներ (հանրային կառավարում կրթական ծրագրով)
3. Մարդկային ռեսուրսների և տաղանդների կառավարում
4. Տնտեսության պետական կարգավորում
5. Կառավարչական վերլուծություն
6. Ֆինանսական վերլուծություն
7. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման արդի հիմնախնդիրներ
8. Գանձապետական համակարգի կառավարում
9. Կառավարչական որոշումների ընդունման տեսություն
10. Հանրային ֆինանսների կառավարում
11. Էկոնոմետրիկա
12. Կորպորատիվ ֆինանսներ
13. Արտաքին աուդիտ
14. Ներքին աուդիտ
15. Ռազմավարական կառավարում
16. Ճգնաժամային կառավարում
17. Իրավական ակտերի մշակման մեթոդաբանություն
18. Բիզնես ռազմավարություն
19. Մարքեթինգի կառավարում
20. Հաշվապահական հաշվառում և հարկում
21. Գործարար բանակցություններ
22. Մոդելավորում և վերլուծություն կառավարիչների համար

3. Իրավագիտության ամբիոնում 2016թ. սեպտեմբերի 14-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և ակադեմիայի գիտական խորհրդին միջնորդում են հաստատել հետևյալ առարկայական ծրագրերը՝

1. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն
2. Վարչական պատասխանատվության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում
3. Մահմանադրական վերահսկողություն և հսկողություն
4. Ընտրությունների կազմակերպչի րավական հիմնախնդիրներ
5. Համեմատական սահմանադրական իրավունք
6. Մաքսային իրավունք
7. Պաշտամենտական իրավունք
8. Աշխատանքի և սոցիալական ապահովության իրավունք
9. Բանկային իրավունք
10. Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը

4. Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնում 2016թ. սեպտեմբերի 29-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է և ակադեմիայի գիտական խորհրդին միջնորդում են հաստատել հետևյալ առարկայական ծրագրերը՝

1. Տեղեկատվական տեխնոլոգիաներ և էլեկտրոնային կառավարում
2. Մասնագիտական օտար լեզու
3. Պետական պաշտոնական լեզու

5. Քաղաքագիտության ամբիոնը քննարկել է առարկայական ծրագրերի հաստատման հարցը և որոշակի վերամշակման անհրաժեշտությունից ելնելով այն կներկայացվի հաջորդ գիտական խորհրդի նիստին:

**Արտահայտվեցին՝** Ա.Եզեկյանը, Գ.Գսպոյանը, Լ.Պետրոսյանը, Ա.Այվազյանը:

**Որոշեցին՝**

1. Հաստատել հոգեբանության ամբիոնի ներկայացրած առարկայական ծրագրերը:
2. Հաստատել հանրային կառավարման ամբիոնի ներկայացրած առարկայական ծրագրերը:
3. Հաստատել իրավագիտության ամբիոնի ներկայացրած առարկայական ծրագրերը:
4. Հաստատել լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի ներկայացրած առարկայական ծրագրերը:
5. Քաղաքագիտության ամբիոնի առարկայական ծրագրերի հաստատման հարցը քննարկել հոկտեմբերի գիտական խորհրդի նիստում՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ որոշ առարկայական ծրագրեր ունեն վերամշակման անհրաժեշտություն:

**4.Լսեցին՝** Ընթացիկ հարց: Ասպիրանտների և հայցորդների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Զեկուցողը նշեց, որ՝

1. Հանրային կառավարման ամբիոնում 2016թ. սեպտեմբերի 19-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ասպիրանտներ Արսեն Գագիկի Զաքարյանի, Կարեն Հազարապետի Միքայելյանի և Սեդրակ Սերգոյի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Ամբիոնը միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝

1) Հանրային կառավարման ամբիոնի ասպիրանտ Արսեն Գագիկի Զաքարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ռիսկերի կառավարման արդի հիմնախնդիրները և կարգավորման ուղիները (Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի օրինակով)» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հակոբի Բայադյանին:

2) Հանրային կառավարման ամբիոնի ասպիրանտ Կարեն Հազարապետի Միքայելյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Տնտեսական շահերի հիմնախնդիրները ներդրելով մի կայում» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Նորայրի Մանասերյանին:

3) Հանրային կառավարման ամբիոնի ասպիրանտ Սեդրակ Սերգոյի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Պետական կառավարման համակարգի գործառնության թարեփոխումների արդյունավետության բարձրացման հիմնական

ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել տնտ.գիտ. թեկնածու, դոցենտ Խորեն Ալբերտի Մխիթարյանին:

2. Իրավագիտության ամբիոնում 2016թ. սեպտեմբերի 14-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է առկա ուսուցմամբ ասպիրանտ Գեորգի Պյոտրի Ավագյանի և հայցորդներ Արսեն Գեորգիի Պողոսյանի, Արման Կառլենի Մելքոնյանի, Ռոբերտ Սուրենի Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Ամբիոնը նիստում կայացրած որոշմամբ միջնորդում է Ակադեմիայի գիտական խորհրդին՝

1) Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Գեորգի Պյոտրի Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ողջամիտ ժամկետը որպես քրեական դատավարությունում քաղաքացիների սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության երաշխիք» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ռաֆիկ Գարեգինի Պետրոսյանին:

3) Իրավագիտության ամբիոնի հայցորդ Արսեն Գեորգիի Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «ՀՀ քաղաքացիական ավիացիայում ահաբեկչության հակազդման սահմանադրաիրավական կառուցակարգերը» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

4) Իրավագիտության ամբիոնի հայցորդ Արման Կառլենի Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության սահմանադրաիրավական հիմնահարցերը մարդու առողջության պահպանման ոլորտում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

5) Իրավագիտության ամբիոնի հայցորդ Ռոբերտ Սուրենի Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Դատական ակտերի հարկադիր կատարումը որպես անձի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության երաշխիք» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հենրիկի Երիցյանին:

## **Որոշեցին՝**

1) Հանրային կառավարման ամբիոնի ասպիրանտ Արսեն Գագիկի Զաքարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ռիսկերի կառավարման արդի հիմնախնդիրները և կարգավորման ուղիները (Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի օրինակով)» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հակոբի Բայադյանին:

2) Հանրային կառավարման ամբիոնի ասպիրանտ Կարեն Հազարապետի Միքայելյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Տնտեսական շահերի հիմնախնդիրները ներդրելոնումիկայում» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական

ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Թաթուլ Նորայրի Մանասերյանին:

3) Հանրային կառավարման ամբիոնի ասպիրանտ Սեդրակ Սերգոյի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Պետական կառավարման համակարգի գործառույթային բարեփոխումների արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել տնտ.գիտ. թեկնածու, դոցենտ Խորեն Ալբերտի Մխիթարյանին:

4) Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Գեորգի Պյոտրի Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Ողջամիտ ժամկետը որպես քրեական դատավարությունում քաղաքացիների սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության երաշխիք» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Ռաֆիկ Գարեգինի Պետրոսյանին:

5) Իրավագիտության ամբիոնի հայցորդ Արսեն Գեորգիի Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայում ահաբեկչության հակազդման սահմանադրաիրավական կառուցակարգերը» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

6) Իրավագիտության ամբիոնի հայցորդ Արման Կառլենի Մելքոնյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության սահմանադրաիրավական հիմնահարցերը մարդու առողջության պահպանման ոլորտում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

7) Իրավագիտության ամբիոնի հայցորդ Ռոբերտ Սուրենի Ղազարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Դատական ակտերի հարկադիր կատարումը որպես անձի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության երաշխիք» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և հիմք ընդունելով գիտական ղեկավարի համաձայնությունը՝ գիտական ղեկավար նշանակել իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արմեն Հենրիկի Երիցյանին:

**5. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հայցորդ Արտաշես Գագիկի Բեգլարյանի ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

Ձեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Ձեկուցողը ներկայացրեց, որ Իրավագիտության ամբիոնում 2016թ. սեպտեմբերի 14-ին կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Արտաշես Գագիկի Բեգլարյանի «Ուղղակի հարկերի համակարգի բարեփոխման սահմանադրաիրավական նախադրյալները ՀՀ-ում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը և միջնորդում են գիտական խորհրդին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ատենախոսության թեմայի ծավալը պահանջում է գիտական ուսումնասիրության լայն շրջանակ, թեման փոխել հետևյալ վերտառությամբ՝ «Հարկային քաղաքականության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի արդիականացման պայմաններում (սահմանադրաիրավական վերլուծություն)»:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Խ.Բեգիրջյանը, Ա.Եզեկյանը:

**Որոշեցին՝** Իրավագիտության ամբիոնի ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Արտաշես Գազիկի Բեզլարյանի «Ուղղակի հարկերի համակարգի բարեփոխման սահմանադրաիրավական նախադրյալները ՀՀ-ում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման փոխել «Հարկային քաղաքականության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի արդիականացման պայմաններում (սահմանադրաիրավական վերլուծություն)» վերտառությամբ:

**6. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Գիտական խորհրդի կազմի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյան:

Ա.Լոքյանը նշեց, որ պայմանավորված այն հանգամանքով, որ գիտական խորհրդի անդամներ Տաթևիկ Սարգսյանը, Ջուլիետա Նիկողոսյանը և Մանուկ Խաչատրյանը ավարտել են Ակադեմիան, ուստի անհրաժեշտ է փոխել գիտական խորհրդի կազմը և համալրել նոր ուսանողներով: Ուսանողական խորհուրդը ներկայացրել է համապատասխան անդամների ցանկը, ուստի առաջադրում էմ հաստատել գիտական խորհրդի հետևյալ կազմը՝

**1. Արսեն Լոքյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ, բժշկական գիտությունների թեկնածու

**2. Ամալյա Սարիբեկյան**

ՀՀ Նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ, տնտեսագիտության թեկնածու

**3. Հրանուշ Հակոբյան**

ՀՀ սփյուռքի նախարար, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

**4. Խաչատուր Բեգիրջյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, կենսաբանական գիտությունների թեկնածու

**5. Թերեզա Խեչոյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արտաքին կապերի գծով պրոռեկտոր

**6. Գորիուն Ադամյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու

**7. Հայկ Սարգսյան**

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**8. Ադասի Սարգսյան**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**9. Արտակ Բաղդասարյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վերապատրաստման, որակավորման բարձրացման և գիտահետազոտական գործունեության բաժնի պետ, քաղաքագիտության թեկնածու

**10. Արմենակ Այվազյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու

**11. Մարիամ Մարգարյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր

**12. Գրիշա Գսպոյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հանրային կառավարման ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**13. Ռուբեն Աղուզումցյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**14. Արմեն Եզեկյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ, իրավագիտության թեկնածու, դոցենտ

**15. Լուսինե Զիլֆուղարյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնամեթոդական վարչության պետ

**16. Նաիրա Ղազարյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի բաժնի պետ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

**17. Ավետիս Գևորգյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու

**18. Հասմիկ Ստեփանյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար, գիտական խորհրդի նիստի քարտուղար, իրավագիտության ամբիոնի դոցենտ, իրավ.գիտ. թեկնածու, դոցենտ

**19. Լատիբա Պետրոսյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արհեստակցական կազմակերպության նախագահ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**20. Գայանե Հովհաննիսյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու

**21. Նորայր Նազարյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1521 թողարկման «Իրավագիտություն» մասնագիտության մագիստրանտ

**22. Նարեկ Խաչումյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1622 թողարկման «Հանրային կառավարում» մասնագիտության մագիստրանտ

**23. Արսեն Աղաջանյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1521 թողարկման «Քաղաքագիտություն (քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն)» մասնագիտության մագիստրանտ, ուսանողական խորհրդի նախագահ

**24. Լիլյա Վարդանյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1622 թողարկման «Հոգեբանություն» մասնագիտության մագիստրանտ

**25. Անի Սարգսյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1521 թողարկման «Կառավարում (հանրային ֆինանսների կառավարում)» մասնագիտության մագիստրանտ

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Խ.Բեգիրջյանը, Անի Սարգսյանը:

**Որոշեցին՝** Հաստատել գիտական խորհրդի կազմը:

9. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Հայ-ֆրանսիական իրավաբանական մասնագիտացումների ֆեդերացիայի նախագահ, Ակադեմիայի գործընկեր Ռայմոնդ Եզեգեյանին Ակադեմիայի ոսկե մեդալով պարգևատրելու հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա. Լոքյան:



Ռեկտոր Ա.Լոքյանը գիտական խորհրդի անդամներին առաջարկեց Հայ-Ֆրանսիական իրավաբանական մասնագիտացումների ֆեդերացիայի նախագահ, Ակադեմիայի գործընկեր Ռայմոնդ Եզեզեյանին պարզևատրել Ակադեմիայի ոսկե մեդալով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ռ.Եզեզեյանը 2014 թվականից միանվագ կրթաթոշակ և սոցիալական աջակցություն է տրամադրել բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով ավելի քան 25 ուսանողների, հիմնովին նորոգել, կահավորել և տեխնիկապես ապահովել է մեկ լսարան:

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Խ.Բեզիրջյանը, Մ.Մարգարյանը:

**Որոշեցին՝** Հայ-Ֆրանսիական իրավաբանական մասնագիտացումների ֆեդերացիայի նախագահ, Ակադեմիայի գործընկեր Ռայմոնդ Եզեզեյանին պարզևատրել Ակադեմիայի ոսկե մեդալով:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան  
30 սեպտեմբերի 2016թ.

Կ.Տ.